Վիսքյուով բուժման Ձեր ուղեցույցը

(բրոլուցիզումաբ)

Նեովասկուլյար (թաց) տարիքային մակուլյար դեգեներացիայի (ՏՄԴ) բուժման համար

Նովարտիս

© 2020 Novartis 9/20 GLOPH/BRO/0222(2) <նշել տեղական իրավասու մարմնի կողմից հաստատման ամսաթիվը> v3.1

Ի՞նչ է իրենից ներկայացնում նեովասկուլյար (թաց) տարիքային մակուլյար դեգեներացիան (ՏՄԴ):

ՏՄԴ է տեղի ունենում, երբ մակուլայի տակ ձևավորվում և զարգանում են ոչ նորմալ արյունատար անոթներ: Աչքի ետնամասում տեղակայված մակուլան է պատասխանատու հստակ տեսողության համար: Ոչ նորմալ արյունատար անոթներից հեղուկ կամ արյուն կարող է արտահոսել աչքի մեջ և խոչընդոտել մակուլայի գործառույթին՝ հանգեցնելով տեսողության անկման:

Ինչու՞ են ինձ նշանակել Վիսքյու

Վիսքյուն պարունակում է բրոլուցիզումաբ ակտիվ նյութ, որը պատկանում է հականեովասկուլյարիզացնող դեղերի խմբին: Վիսքյուն ներարկվում է աչքի մեջ («ինտրավիտրեալ ներարկում») ձեր բժշկի կողմից՝ այդկերպ բուժելով ՏՄԴ-ն մեծահասակների մոտ:

Անոթային էնդոթելիալ աճի գործոն A (VEGF-A) կոչվող նյութը խթանում է աչքի արյունատար անոթների աճը: Վիսքյուն արգելակում է VEGF-A նյութի ազդեցությունը և նվազեցնում է ոչ նորմալ արյունատար անոթների աճը ՏՄԴ-ի դեպքում, ինչն էլ իր հերթին նվազեցնում է հեղուկի կամ արյան արտահոսքը աչքի մեջ:

Բուժումից հետո

• Ներարկումից հետո Ձեր բժիշկը կանցկացնի աչքի որոշ հետազոտություններ: Այդ հետազոտությունները կարող են ներառել աչքի ճնշման չափումը կամ օպտիկական նյարդի վիճակի գնահատումը:

• Երբեմն, ինտրավիտրեալ ներարկումից հետո, ինչպիսին է Վիսքյուի ներարկումը, կարող է առաջանալ՝

- Հազվադեպ, բայց ծանր բորբոքում, ինչը սովորաբար կապված է լինում «էնդոֆտալմիտ» կոչվող աչքի վարակի հետ,
- Ցանցաթաղանթում արյունատար անոթների բորբոքում (ցանցաթաղանթի վասկուլիտ) և/կամ աչքի ետնամասում արյունատար անոթների խցանում (ցանցաթաղանթի անոթների օկլյուզիա) - Միջին ծանրության բորբոքման տեսակ, որը կոչվում է «ներակնային բորբոքում»,

- Իմունային պատասխան (իմունոգենություն),

- Աչքի ճնշման ժամանակավոր բարձրացում: Ճնշման բարձրացումը հաճախ հանդիպող երևույթ է, սակայն սովորաբար առանց ախտանիշների է:

• Առկա է ցանցաթաղանթի շերտազատման (հազվադեպ) կամ ցանցաթաղանթի պատռվածքի (հաճախ հանդիպող) զարգացման հավանականություն:

• Անհրաժեշտ է անհապաղ դիմել Ձեր բժշկին, եթե ունեք այս ախտանիշներից որևէ մեկը՝

- Տեսողության հանկարծակի անկում կամ փոփոխություն, ներառյալ՝ տեսողության մեջ փոքր մասնիկների քանակի աճ,
- Ցավ, անհանգստություն կամ կարմրություն աչքերում,
- Լույսի բռնկումներ:

Ի՞նչ կարող եմ անել բուժումից հետո

• Ներարկումը կարող է ժամանակավորապես ազդել Ձեր տեսողության վրա (օրինակ, պղտորված տեսողություն): Մի վարեք մեքենա կամ մի աշխատեք սարքավորումների հետ, քանի դեռ այս կողմնակի ազդեցությունները շարունակվում են:

• Եղեք նախաձեռնող և իրազեկեք Ձեր բժշկին կամ բուժքրոջը, եթե նկատում եք տեսողության փոփոխություններ:

• Կարևոր է պահպանել Ձեր բժշկի կողմից առաջարկված այցելությունների ժամանակացույցը:

Ինչպե՞ս կապվել ակնաբուժական կենտրոնի հետ

Կոնտակտ՝_____

Հեռ.՝_____

Հասցե՝_____

Էլ. հասցե՝ _____

ՏԴՍ-ներին՝

Այս հատվածը հատկացվում է ակնաբուժական կենտրոնին՝ իրենց կոնտակտային տվյալները նշելու համար: